# Գիրք՝ նվիրված Հատուկ գնդի մարտիկներին



Սեպտեմբերի 20-ին, Հատուկ գնդի կազմավորման 9-րդ տարելիցի տոնակատարության առթիվ թանկարժեք նվեր ստացան գնդի վետերանները: Նրանք սրտի թրթիռով եւ հպարտությամբ ձեռքից-ձեռք էին փոխանցում Սամվել Եղիազարյանի «Նվիրյալները» գիրքը:

Գիրքը ներկայացնում է Հատուկ գնդի զոհված ազատամարտիկներին, ովքեր առաջինը արձագանքեցին նորաստեղծ պետության կոչին եւ առանց երկմտելու մտան պետական կառույց, սկիզբ դնելով ազգային կանոնավոր բանակի ստեղծմանը: Հեղինակը նշխարքի նման փշուր-փշուր հավաքել եւ ի մի է բերել պատերազմի արյունոտ ճանապարհներին կորցրած ընկերների սուրբ հիշատակները: Գիրքը, որն աչքի է ընկնում հրատարակչական ու տպագրական որակով եւ բարձրաճաշակ ձեւավորմամբ, Արցախյան ազատամարտի պատմությունը կհարստացնի եւս մեկ ճշգրիտ վավերագրությամբ:

Հ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ